

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ (XVI Դ. ԿԵՍԵՐ – XX Դ. ՍԿԻԶԲ)

Երևան, «Գիտություն» հրատ., 2024, 422 էջ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Հակոբյանի «Պետականության վերականգնման գաղափարը հայոց պատմության հոլովույթում (XVI դ. կեսեր – XX դ. սկիզբ)» ուշագրավ աշխատությունը:

Գրքի պատասխանատու խմբագիրն է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկազ Հովհաննիսյանը:

Ներածականում հեղինակը նշում է, որ հայոց պետականության վերականգնման տեսլականը դարեր շարունակ ուղեկից է եղել հայ մտավոր և քաղաքական շրջանակներին: Այսպես, Բագրատունյաց կենտրոնական թագավորության անկումից շատ չանցած, միջնադարի հայ խոշորագույն իրավագետ Մխիթար Գոշն իր «Հայոց դատաստանագիրքը» աշխատության մեջ, ի թիվս այլ կարևորագույն հիմնահարցերի, անդրադարձել է նաև ազգային ինքնագիտակցության և ազգային պետականության վերականգնման հղացքին: Հավատարիմ իր դարաշրջանի քաղաքական մտածողության ոգուն, վերջինս ուժեղ ինքնիշխան պետականությունը կապում էր կառավարման միապետա-

կան (թագավորական) ձևի հետ: Մ. Գոշի սույն տեսակետը կիսում է միջնադարյան Հայաստանի մեկ ուրիշ անվանի օրենսգետ՝ Սմբատ Սպարապետը (Գունդստաբլ): Ըստ Ա. Հակոբյանի, ողջ միջնադարի ընթացքում հայ ազատագրական գաղափարաբանության կայծերն ու արծարծումները կենսունակ են եղել Հայաստանի տարածքում. «Հարկ է նշել, որ արտաքին և ներքին մի շարք աննպաստ գործոններով պայմանավորված, հին և միջնադարյան թագավորությունների անկումից հետո էլ հայ իրականության մեջ՝ աշխարհական և հոգեւոր շրջանակներում ոչ միայն բնավ չմարեցին Հայոց անկախ պետականության վերականգնման գաղափարական-քաղաքական ակունքները, այլև ժամանակ առ ժամանակ Հայաստանի տարբեր հատվածներում, անցյալի ավանդույթի ուժով, հիմնվեցին և գործեցին հայկական պետական կազմավորումների առանձին բեկորներ» (էջ 9):

Բարդ ու բազմաբովանդակ է հայոց պետականության վերականգնման գործընթացի տարեգրությունը մի քանի դարերի հոլովույթում:

Հեղինակը նախ քննության է առնում հայ հոգևոր և աշխարհիկ շրջանակների դիրքորոշումը Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրման ուղիների հարցում՝ պատմական ծավալուն ակնարկ նետելով մեր պատմության XVI – XVII դարերի խճապատկերի վրա:

Հետաքրքրական է այն դիտարկումը, որ հայոց բազմադարյան պատմության ընթացքում գրեթե միշտ օրակարգային է եղել հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հիմնահարցը սկսած հին դարերից՝ Աքեմենյանների, Հին Հռոմի, Պարթև-Արշակունիների ու արաբների ժամանակներից: Պատմականորեն հայ ազգը, հայ ժողովուրդը թվաքանակով եղել է ոչ մեծաթիվ (Մ. Խորենացու վկայությունը՝ փոքր ածու, թվով սահմանափակ ու զորությամբ թույլ լինելու մասին), որ անգամ հին և միջնադարյան թագավորությունների առկայության պայմաններում, նրա օրակարգում դրված է եղել քաղաքական կողմնորոշումների հարցը՝ աշխարհագրական և տարածաշրջանային գրեթե բոլոր ուղղություններով, սկզբնական շրջանում դեպի Արևմուտք ևս, իսկ նոր ժամանակներում՝ հիմնականում դեպի Հյուսիս (Ռուսաստան):

Ըստ հեղինակի դիտարկումների, դեռևս միջնադարում մի շարք առումներով քաղաքական կողմնորոշումների զոհ կարելի է համարել Բագրատունյաց կենտրոնական թագավորությունը, քանզի հայոց թագավորության ներքին հակասություններն ընթացան սեփական ուժերին ապավինելու կողմնակիցների (սպարապետ Վ. Պահլավունու գլխավորությամբ) և օտար պետութ-

յանը՝ Բյուզանդիային կամավոր հանձնելու ու հանձնվելու ուժերի (Պետրոս Գետադարձի և Վեստ Սարգսի դերակատարությամբ) միջև:

Քննության են առնվում նաև պատմական խոր արմատներ ունեցող լեգենդ-գուշակությունների առաջացման և ձևավորման հանգամանքներն ու գործոնները և դրանց թողած հետագիծը հայ հանրային մտածողության վրա:

Աշխատության էջերում հետաքրքիր զուգորդումներով և անցումներով դիտարկվում են հայ հանրության մտահոգևոր ընկալումները հայրենիքի ազատագրման հիմահարցի վերաբերյալ: Հեղինակը Հայաստանի և հայ ժողովրդի ազատագրության ուղիների վերաբերյալ տարբերակում է երեք հիմնական մոտեցումներ.

1. Պահպանողական, որը տիրապետող է եղել հայ հոգևորականության հատվածում:
2. Արտաքին ուժերի և գործոնների օգնությամբ երկրի ազատագրումը իրականացնելու հնարավորությունների ձևավորում:
3. Սեփական ուժերին ապավինելու ռազմավարություն, որը լավագույնս ձևակերպել է ազատագրական պայքարի փայլուն գաղափարախոս Գ. Նժդեհը. «Ինքն իրեն յարգող ժողովուրդը իր ինքնապաշտպանութեան յոյսը դնում է նախ իր բազուկի, իր զէնքի վրայ» (էջ 30):

Հետաքրքիր, թարմաշունչ ձևակերպումներ ու դիտարկումներ է պարունակում ազատության և անկախության համար հայ հոգևոր և աշխարհիկ գործիչների քաղաքական դեգերումներն արտացոլող գլուխը, որում համոզիչ, խիստ տրամաբանական քննարկումներ ու վերծանումներ են կատարվում, նոր եզրահանգումներ են ի հայտ գալիս:

Մի ամբողջ գլուխ նվիրված է Իսրայել Օրու ռուսաստանյան առաքելությանը և հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման հիմահարցի նորովի քննությանը, որը մեկ անգամ ևս վկայում է, որ այն շարունակում է մնալ հայ պատմագիտական մտքի ուշադրության առանցքում: Այնուհետև ժամանակագրական կարգով՝ հաջորդաբար ներկայացվում է հայ ազատագրական շարժման վերելքը XVIII դարի սկզբներին և այդ դարի երկրորդ կեսին (հնդկահայ և ռուսահայ ծրագրերը), պետականության վերականգնման համար հայ հասարակական-քաղաքական միտքն ու շարժումները XIX դարում, ապա՝ Արևմտահայերի ազգային սահմանադրությունը հայոց պետականության վերականգնման գաղափարի հոլովույթում:

Առավել թարմ և արդիական հարցադրումներ ու շեշտադրումներ են հնչում վերջին երկու գլուխն ընդգրկող բաժիններում (գլուխ VII. – «Հայ հասա-

րական-քաղաքական շրջանակների դիրքորոշումներն ու արձագանքները Հայաստանի ազատագրման ուղիների հարցում (XIX դարի 70–80-ական թթ.)», և գլուխ VIII. – «Հայ ազգային կուսակցությունները՝ իբրև Հայաստանի ազատագրման և պետականության վերականգնման ռազմավարության ու մարտավարության ծրագրավորողներ»:

421 էջ ընդգրկող սույն աշխատությունը ընթերցվում է ուշադրության սևեռումով և այն, անկասկած, կարևոր ներդրում է հայ պատմագիտական մտքի անդաստանում:

Այսքանից հետո թերևս արժե նշել մեկ-երկու դիտողություն՝ դիտարկումների ձևով:

Աշխատության էջերում կան անհարկի, չհիմնավորված ծավալուն շեղումներ բուն նյութից՝ այն է պետականության վերականգնման հիմնահարցից դեպի ազգային ազատագրական շարժումները: Անշուշտ, դրանք մեկը մյուսից բխող և մեկը մյուսին լրացնող թեմաներ են, սակայն որոշակիորեն պետք էր տարանջատել միմյանցից:

Նույնը վերաբերում է օգտագործված գրականությանը, որը կարծում ենք, ուռճացված է, ավելորդ մեջբերումներ և հիշատակումներ կան:

Ինչևէ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Ա. Հակոբյանի նոր մենագրությունը մնայուն գործ է հայ գիտական հասարակայնության գրասեղանին:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու,

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

armenaraqsyan@mail.ru

0009-0003-6026-2790

DOI: 10.54503/1829-4073-2024.2.210-213